ԲՈՒՍԱԿԱՆ ՅՈՒՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

ԳՈՀԱՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսին Հայաստանը հիմնականում գյուղատնտեսական երկիր էր և նրա տնտեսության մեջ կարևոր տեղ էր գրավում սննդամթերքների, այդ թվում նաև բուսական յուղերի արտադրությունը։ Արտադրության տարբեր ճյուղերը (բուսական յուղերի, կաթնամթերքների և այլն) ապրել են զարգացման տևական շրջան՝ սկսած բնատնտեսությունից մինչև գործարանային արտադրություն։ Անգամ XIX դ. վերջին և XX դ. սկզբին արտադրության այս ձևերը երբեմն պահպանվել են զուգահեռաբար։ Այդ տեսակետից Արևելյան Հայաստանում բուսական յուղի արտադրության պատմության հետազոտումը զգալի հետաքրքրություն ներկայացնող խնդիր է և պատահական չէ, որ դրանով զբաղվել են ժամանակի ուսումնասիրողները[1]։ Բայց այս կամ այն հարցը լուսաբանելիս թե՛ ժամանակի և թե՛ սովետահայ գիտնականները երկրի արդյունագործությանը և արհեստագործությանն անդրադարձել են հպանցիկ։

XIX դ. երկրորդ կեսից Արևելյան Հայաստանում ապրանքային արտադրության զարգացման շնորհիվ գյուղական բնակչության մի մասն աստիճանաբար վեր էր ածվում մանր արտադրողների, որոնք, զբաղվելով հումքի վերամշակումով, արտադրանքը դուրս էին բերում շուկա։ Նոր կացութաձևի առաջընթացի պայմաններում ձիթհանությունը ևս ներգրավվեց կապիտալիստական արտադրության ոլորտը և կրեց մասնակի որակական փոփոխություն։ Ըստ Ի. Շոպենի, 1830-ական թվականներին Հայկական մարզում եղել է 285 ձիթհանք, որից գործել են 35-ը։ Դրանք տարեկան արտադրել են 15000 փութ յուղ[2]։ Չորս բաթման[3] սերմնահատիկից քամում էին 1 բաթման յուղ՝ 1 ռ. 60 կոպ.-ից մինչև 2 ռ. 40 կոպ. արժողությամբ[4]։

1860-ական թվականներին բուսական յուղի արտադրությունն աշխուժացավ։ 1864 թ. տվյալներով Երևանի նահանգում գործում էր 227 ձիթհանք, որոնցից 220-ը գտնվում էր գյուղերում, իսկ 7-ը՝ քաղաքներում։ Այս ձեռնարկություններում աշխատում էր 700 բանվոր (մշակ), իսկ արտադրանքի տարեկան արժեքը կազմում էր 90000 ռ.[5]։ Բուսական յուղի ստացման համար օգտագործում էին քունջութի, վուշի կամ կտավատի[6], գերչակի կամ տզկա-

---

1 В. Геевский, Краткий очерк земледелия Закавказья, Тифлис, 1887; К. Хатисов, Кустарные промыслы Закавказского края, Тифлис. 1891; Ст. Гулишамбаров, Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1894 и другие.

2 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, с. 861.

3 *Բաթմանը հավասար է 18 ֆունտի, իսկ մեկ ֆունտը՝ մոտ 410 գրամի։*

4 И. Шопен, *նշվ. աշխ., էջ 861։*

5 *ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 125, ց. 1, գ. 4, թ. 55—56։*

6 *Մեր օգտագործած ռուսերեն սկզբնաղբյուրներում և գրականության մեջ թե՛ վուշի և թե կտավատի համար օգտագործվում է «лён» բառը։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանում մեծ տարածում ուներ կտավատի մշակությունը, այսուհետև կօգտագործենք միայն կտավատ անվանումը։*

նեփի, կանեփի, բամբակի, ծխախոտի, սորուկի և այլ բույսերի սերմնահատիկները։

1870 թ. Երևանի նահանգում արտադրված բուսական յուղատեսակների արտադրության մասին մոտավոր պատկերացում է տալիս № 1 աղյուսակը[7]։

Աղյուսակ № 1

Ձիթայուղի սերմնատեսակները	Օգտագործվող սերմերի քանակը (փթերով)	Ստացված յուղի քանակը (փթերով)	Մեկ փութ յուղի արժեքը (ռուբլիներով)	Ամբողջ արտադրանքի արժեքը (ռուբլիներով)
1. քունջութ	111375	37125	6—8	222750—297000
2. կտավատ	191323	31887	4	127548
3. տղկանեփ կամ գերչակ	40340	8068	3—4	24204—32272
4. սորուկ	23044	6210	1,5 2,5	9315—15525
ընդամենը	366082	83290	միջինը մոտ 4	383817—472345

№ 1 աղյուսակից երևում է, որ քունջութի ու կտավատի յուղատեսակները (առանձնապես քունջութի յուղը, որը լավ համ ուներ և իր որակով չէր զիջում Թուրքիայից ներմուծվող ձիթապտղի յուղին) մեծ պահանջարկ ունեին տեղի և հարևան նահանգների բնակչության շրջանում։ Քունջութը ցանում էին Նախիջևանի, Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի և այլ գավառների հարթավայրային տաք շրջաններում։ 1870-ական թվականներին միայն Երևանի և Էջմիածնի գավառները տարեկան տալիս էին ավելի քան 100000 փութ քունջութի սերմնահատիկ[8]։ Կտավատի մշակմամբ զբաղվում էին երկրի լեռնային վայրերում։ Բացի ձիթայուղի ստացումից, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի գավառների բնակիչները կտավատից ստանում էին մանրաթել, որից գործում էին կոպիտ կտավ։ 1870 թ. նահանգում կտավատի ցանքսի համար օգտագործվել է 5313 դեսյատին հողատարածություն[9]։

Երևանի նահանգում և Կարսի մարզում աճեցրած քունջութի և կտավատի սերմնահատիկները մեծ պահանջարկ ունեին Անդրկովկասում, Ռուսաստանում և արտասահմանյան մի շարք երկրներում։ Ամեն տարի բավականաչափ քունջութ էր առաքվում Օդեսա։ Այն օգտագործում էին հալվայի արտադրության մեջ։ 1886 թ. Բաթումի նավահանգստով արտահանվել է 66720, իսկ 1888 թ.՝ 24220 փութ կտավատի սերմ[10]։ Նշված բույսերի սերմերի մշակումն ընթանում էր տեխնոլոգիական տարբեր պրոցեսներում։ 3—4 օրվա ընթացքում մշակվում էր մեկ խալվար (30 փութ) քունջութ (30—50 ռ. արժողությամբ), որից ստացվում էր 6—7,5 փութ յուղ։ Մեկ փութ յուղը վաճառվում էր 6—9 ռ.։ Մեկ ճող (12—13,5 փութ) կտավատի սերմնահատիկը մշակվում էր 3 օրվա ընթացքում։ Միաժամանակ ընթացքի մեջ էր դրվում երեք ճող հումք, բայց հաջորդաբար օրվա ընթացքում արտադրվում էր մեկը (մեկ օր բովել, մեկ օր մանրացնել, մաղել, ջուր տալ և մեկ օր էլ մամլել)։ Մեկ ճող հումքից ստացված արդյունքից մշակներին, որպես վարձատրություն, տրվում էր 9 ֆունտ, ձիթհանքի լուսավորության համար (3 գիշեր) օգտագործվում էր 1,5 ֆունտ, վառելիքի դիմաց՝ 1,5 ֆունտ, ընդամենը 12 ֆունտ։ Այդ

---

7 «Сборник сведений о Кавказе», т. II, Тифлис, 1872, с. 177—180.

8 Ст. Гулишамбаров, նշվ. աշխ., էջ 217։

9 «Сборник сведений о Кавказе», т. II, с. 177.

10 Ст. Гулишамбаров, նշվ. աշխ., էջ 222—223։

ընթացքում հումքի տեր գյուղացին պարտավոր էր ապահովել մշակների մեկ օրվա ուտելիքը և բանող գոմեշների անասնակերը։ Վարձահատույց լինելուց հետո գյուղացուն մնում էր 6—8 լիդր (1 լիդրը հավասար էր 12 ֆունտի) բուսական յուղ և 26—30 լիդր քուսպ։ Նա, իր կարիքների համար վերցնելով 1—3 լիդր, ավելցուկը վաճառում էր (կտավատի հումքի 1 խալվարը (30 փութ) արժեր 20—30 ռ., իսկ յուղի ֆունտը՝ 15—20 կոպ.)։ Եթե ընդունենք, որ նա վաճառում էր 5 լիդր (60 ֆունտ), ապա կստացվի մոտ 10—15 ռ. դրամական եկամուտ[11]։

Ձիթհանքի տերը մի դեպքում շահավետ գներով հումքը գնում էր գյուղացիներից՝ արտադրանքը վաճառելով շուկայում, իսկ մյուս դեպքում՝ մշակում էր գյուղացու սերմ-հումքը և որպես վարձատրություն վերցնում էր ստացված արդյունքի կամ դրա արժեքի որոշ մասը։

Ձեռնարկատերը 1 փութ քունջութի յուղի դիմաց վերցնում էր 1 ռ. 50 կոպ., իսկ կտավատի յուղի դեպքում՝ 1 ռ. վարձ[12]։ Երբեմն էլ վարձը դանձվում էր բնամթերքով՝ բուսական յուղով։ 1900 թ. տվյալներով 3 փութ կտավատի սերմից ստացված 25 ֆունտ յուղից և 2 փութ 10 ֆունտ քուսպից որպես վարձատրություն ձեռնարկատերը վերցնում էր 5 ֆունտ յուղ և 15 ֆունտ քուսպ՝ արտադրանքի մոտ $^1/_5$ մասը[13]։

Ձիթհանքերում կիրառվում էր վարձու աշխատանք։ Յուրաքանչյուր ձեռնարկությունում բանում էր 3—6 բանվոր (մշակ), որոնք չքավոր գյուղացիներ էին և խոր աշնանն ու ձմռանը, գյուղատնտեսական աշխատանքներից աղատ ժամանակ, համաձայնում էին ընչին վարձատրության։ Արտադրության մեջ գոյություն ուներ աշխատանքի որոշակի բաժանում, և վարձատրությունն էլ կատարվում էր ըստ կատարված աշխատանքի։ 1884—1885 թթ. տվյալներով սերմը մանրացնող բանվորն ամսական ստանում էր մոտ 6 ռ., իսկ աղացող, բովող և մամլող բանվորները՝ 10-ական ռ.[14]։ Օրական վարձատրությունը կազմում էր 25—40 կոպ., իսկ ավելի ծանր աշխատանք կատարող (օրինակ, արդեն մածուցիկ դարձած զանգվածը ոտքերով անընդհատ տրորող) բանվորը վարձատրվում էր 50—80 կոպ.[15]։ Ձիթհանքերում բանվորներն աշխատում էին 16—18 ժամ՝ հակասանիտարական և անտանելի պայմաններում։

1884 թ. Երևանի նահանգապետի հաշվետվության համաձայն ըստ գավառների գործել են (աղյուսակ № 2) հետևյալ քանակությամբ ձիթհանքեր[16]։

Եթե 206-ին ավելացնենք Կարսի մարզում գործող մոտ 40 ձիթհանքերը[17], ապա կստացվի 246։ Հաշվետվության մեջ Երևանի գավառի 6 գործարանի համար 16 բանվորի վկայակոչումն անհավանական է, որովհետև ձիթհանքը գործի դնելու համար անհրաժեշտ էր առնվազն 3—6 բանվոր։ Ուրեմն 16-ի փոխարեն պետք է լինի մոտ 24—36։ Բացի այդ, ըստ հաշվետվության Էջմիածնի գավառում գործել է 9 գործարան, մինչդեռ այլ սկզբնաղբյուրների համաձայն, նույն 1884 թ. Էջմիածնի գավառի միայն Ալիբեգլու. (Աթարբեկյան) գյուղում գործում էր ավելի քան 17 ձիթհանք[18]։ Գուցե նահանգապետի

---

11 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 125, ց. 1, գ. 13, թ. 39—41, «Մշակ», 1884, № 28, 29, К. Хатисов. Նշվ. աշխ., էջ 108—109։

12 Ст. Гулишамбаров, Նշվ. աշխ., էջ 281։

13 «Памятная книжка Эриванской губернии на 1904 год», Эривань, 1904, отд. III, с. 34, 39.

14 К. Хатисов, Նշվ. աշխ., էջ 212։

15 «Մշակ», 1884, № 29։

16 Центральный государственный исторический архив СССР (այսուհետև՝ ЦГИА СССР), ф. 1284, оп. 223, д. 116, л. 40, 41.

17 «Кавказский календарь на 1894 г. («Карсская область»)», Тифлис, 1893, с. 128.

18 А. Е. Хан-Агов, Экономический быт государственных крестьян Эчмиадзинского и Сурмалинского уездов Эриванской губернии, Тифлис, 1886, с. 107; «Մշակ», 1884, № 29.

Աղյուսակ № 2

Գավառների անվանումը	Գործարանների թիվը	Արտադրանքի արժեքը (ռուբլիներով)	Բանվորների (մշակների) թիվը
Երևանի	6	2800	16
Նախիջևանի	9	1150	51
Էջմիածնի	9	18000	28
Նոր Բայազետի	70	17395	397
Ալեքսանդրապոլի	57	28500	423
Շարուր-Դարալագյազի	3	360	16
Սուրմալուի	12	8000	30
ընդամենը	206	709 5	961

հաշվետվության մեջ կան և այլ անճշտություններ, այդուհանդերձ բերված տվյալներն ընդհանուր, մոտավոր պատկերացում են տալիս նահանգում բուսական յուղի արտադրության մասին։ Չնայած հաշվետվության մեջ ձիթհանքերը գործարան են նշված, բայց դրանք իրենց արտադրության մակարդակով հեռու էին այդպիսին լինելուց։ Գործում էին ձմռանը (2—3 ամիս), որովհետև չունեին բավականաչափ հումք ու միջոցներ, հետևաբար նաև մշտական բանվորական ուժ։ Յուրաքանչյուրի տարեկան արտադրանքի արժեքը միջին հաշվով հազիվ հասնում էր 250—300 ռ.[19]: 1880-ական թվականներին կառավարության կողմից արդյունաբերական ձեռնարկություններին, ինչպես նաև ձիթհանքերի նկատմամբ կիրառվող ակցիզային քաղաքականության հետևանքով Անդրկովկասում, այդ թվում Երևանի նահանգում, ինչպես նաև Կարսի մարզում առաջացան դժգոհություններ, որովհետև սահմանված հարկը շատ բարձր էր, և ձեռնարկատերերի համար բուսական յուղի արտադրությունը դառնում էր անշահավետ։ Շուտով մտցվեց նոր հարկային սիստեմ, որով հարկադրվեցին միայն այն ձիթհանք ձեռնարկությունները, որոնց տարեկան եկամուտները գերազանցում էին 1000 ռ.[20]։

1880—1890-ական թվականներից սկսած հիշյալ ձեռնարկությունների կողքին երևան են գալիս այնպիսիները, որոնք աստիճանաբար կիրառում էին նոր սարքավորումներ ու արտադրության առաջավոր եղանակներ։ Աշխատանքի մեքենայացումը կամ շոգեշարժ սարքերը դուրս էին մղում ձեռքի աշխատանքը և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը։ 1883 թ. Էջմիածնի գավառի Վաղարշապատ գյուղում տեխնիկ Լ. Խանաղովի ջանքերով ու միջոցներով գործարկվեց, ինչպես ժամանակակիցներն էին անվանում, «շոգեշարժ յուղհանքը»[21], որն առաջինն էր Երևանի նահանգում։ Այստեղ ձեռնարկատերը կատարում էր հումքատեր գյուղացիների պատվերները (նախկինի նման պահելով արդյունքի $^1/_5$ մասը), ինչպես նաև հումք գնելով արտադրում էր շուկայի համար։ Լ. Խանաղովի ձեռնարկությունում աշխատանքի արտադրողականությունն անհամեմատ բարձր էր։ Եթե տնայնագործական միջոցներով մի ճող սերմնահատիկը մշակվում էր 3 օրվա ընթացքում, ապա Լ. Խանաղովի ձեռնարկությունում՝ ընդամենը 4 ժամում[22]։ Այդ ձեռնարկությունում թեև մշակվում էին տարբեր տեսակի բուսական սերմնահատիկներ, սակայն արտադրության առանցքը կազմում էին քունջութն ու վուշը։ 1890 թ. Լ. Խանաղովի ձեռնարկությունում մշակվել են զանազան բույսերի սերմեր,

---

19 М. Мучаидзе, Производство растительных масел в Эриванской губернии («Кавказское сельское хозяйство», Тифлис, 1902, № 454, с. 647).

20 Ст. Гулишамбаров, նշվ. աշխ., էջ 219։

21 А. Е. Хан-Агов, նշվ. աշխ., էջ 92։

22 «Մշակ», 1889, № 29։

որոնցից ստացվել են հետևյալ հարաբերությամբ յուղատեսակներ. քունջութից՝ 42 ֆունտ (100 ֆունտ սերմից), կտավատից՝ 23, ընկույզից՝ 37, ծիրանի կորիզից՝ 36, խաղողի կորիզից՝ 12, ծխախոտի սերմից՝ 26, կանեփից՝ 24, գերշակից՝ 46 ֆունտ և այլն[23]։ Վերոհիշյալ տվյալների քննությունից պարզվում է, որ եթե տեղական հին միջոցներով, օրինակ, քունջութի 100 ֆունտ սերմից քամվում էր 33 ֆունտ բուսական յուղ[24], ապա Լ. Խանազովի շոգեշարժ ձիթհանքը նույնքան սերմից ստանում էր 42 ֆունտ, այն էլ բարձր որակի, որը հիմնականում արտահանվում էր Թիֆլիս և վաճառվում փութը 7 ռ. 50 կոպ.։ Վառելափայտի հումքին ու արտահանման շուկային ավելի մոտ լինելու նպատակով շուտով այս ձեռնարկությունը տեղափոխվեց Ջալալ-Օղլի (Ստեփանավան)։

Հարկ է նշել, որ նման ձիթհանք-գործարան Անդրկովկասում առաջին անգամ հիմնվեց Թիֆլիսում՝ 1880 թ.։ Սակայն այն անհաջողության մատնվեց և միայն 1889-ին վերսկսեց աշխատանքները՝ հայազգի արդյունաբերողներ Ա. Թահիրովի և Կ. Ալիխանովի ջանքերով։ Արտադրության կատարելագործմամբ նրանք ավելի կարճ ժամանակում ու քիչ աշխատուժի կիրառումով ստանում էին առավել որակյալ ու էժան արտադրանք՝ մեկ փութը վաճառելով 6—7 ռ.։ Դրանով նրանք հաջողությամբ պայքարում էին Երևանի նահանգից Թիֆլիս ներմուծվող յուղատեսակների հետ, որոնք վաճառվում էին փութը 8—9 ռ.։ Ա. Թահիրովի ու Կ. Ալիխանովի հիշյալ գործարանը միայն Երևանի նահանգից ներմուծում էր տարեկան 5000—7000 փութ քունջութի սերմ և արտադրում էր 5500 փութ քունջութի և 3000 փութ կտավատի յուղ[25]։

1889 թ. գյուղատնտեսական ու արդյունաբերական ապրանքների կովկասյան ցուցահանդեսում ներկայացված էին այս գործարանի արտադրած նմուշները՝ կտավատի, քունջութի, ընկույզի, կաղինի, արևածաղկի, գերշակի, բամբակի և այլ յուղատու բույսերի սերմերից ստացված (զտված ու չզտված) բազմաթիվ յուղատեսակներ։ Ցուցադրվել էին նաև գործարանի սարքավորումների և շենքի լուսանկարները[26]։

Երևանի նահանգում ու Կարսի մարզում Լ. Խանազովի ձեռնարկությունը համարյա միակն էր։ Բուսական յուղի արտադրությունը հիմնականում կատարվում էր գյուղական մանր ձիթհանքերում, որոնց տերերը, չնայած ձգտում էին կիրառել նոր սարքավորումներ ու առաջավոր մեթոդներ, բայց արտադրությունը մնում էր տնայնագործական, որն է՛լ ավելի ցայտուն էր դրսևորվում կանեփի և գերշակի սերմերի մշակման ժամանակ։ Այդ սերմերը չէին պահանջում մշակման բարդ սարքեր ու միջոցներ։ 1884 թ. «Մշակը» գրում էր. «Գերշակի յուղհանությունը լրիվ տնային բնավորություն ունի, յուրաքանչյուր գյուղացի (Էրևանի նահանգի դաշտային մասերում) ցանում էր այնքան գերշակ, որքան հարկավոր է իրեն տարվա վառելիքը (ճրագի համար) ստանալու համար»[27]։ Այս յուղատու բույսն աճում էր Երևանի նահանգի հովտային շրջաններում[28]։ Գերշակին առանձին հողակտոր չէր հատկացվում։ Այն մյուս կուլտուրաների հետ քիչ քանակությամբ ցանելով, բացի սերմնահատիկների ստացումից, ծառայում էր որպես յուրահատուկ բուսական ցանկապատ՝ տվյալ ցանքատարածության համար։ Երկու-երեք շարք ցանված գերշակի լայն ու դառնահամ տերևներն արգելում էին անասունների մուտքը բամբակի

---

23 Ст. Гулишамбаров, նշվ. աշխ., էջ 221։

24 В. Геевский, նշվ. աշխ., էջ 32։

25 Ст. Гулишамбаров, նշվ. աշխ., էջ 221։

26 «Кавказская выставка предметов сельского хозяйства и промышленности. Краткий путеводитель-план», Тифлис, 1889, с. 23.

27 «Մշակ», 1884, № 29։

28 «Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом отношении», Тифлис, 1897, с. 719—720.

դաշտի խորքը և այն պաշտպանում վնասվելուց։ 1870 թ. այստեղ հավաքել են 40340 փութ գերչակի սերմնահատիկ, որից ստացվել է 8068 փութ յուղ (մեկ փութն արժեր 3—4 ռ.)[29]։ Տեղի բնակչությունն այն օգտագործում էր հիմնականում լուսավորության համար։ Գերչակի յուղն օգտագործվում էր նաև բժշկության մեջ։ Բացի այդ, դրանից ստանում էին տորոնանյութ, որը կայուն էր օճառի ու լույսի նկատմամբ և օգտագործվում էր բամբակյա, բրդյա և մետաքսյա մանրաթելերն ու գործվածքները ներկելու համար։ Իր այս հատկությունների շնորհիվ գերչակի յուղը մեծ պահանջարկ ուներ հատկապես Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության մեջ։ Կովկասից ամեն տարի Ռուսաստան էր ներմուծվում 2 մլն ռ. գերչակի յուղ[30]։ Կառավարությունը ձգտում էր հովանավորել տեղական արտադրությունը, որովհետև կովկասյան գերչակից ստացված յուղն իր որակով չէր զիջում Հնդկաստանից ու Իտալիայից ներմուծվողին և, ինչ խոսք, նախընտրելի էր ունենալ սեփական հումքը։

Նավթարդյունաբերության զարգացման և նավթամթերքների ներմուծման հետևանքով երկրի արտադրական կյանքից աստիճանաբար դուրս էին մղվում բուսական յուղի այն տեսակները (սորուկի, բամբակի, ծխախոտի), որոնք օգտագործվում էին ճրագների համար։ Դրանց փոխարեն աճում էր քունջութի, կտավատի, կանեփի և գերչակի յուղատեսակների պահանջարկը։

1890-ական թվականներին կային զգալի թվով ձիթհանքեր, որոնց եկամուտներն անցնում էին 1000 ռուբլուց և ունեին 1—3 վարպետ ու 3—5 բանվոր։ Միայն Էջմիածնի գավառում 1893 թ. գործում էին քունջութի այդպիսի 8 ձեռնարկություններ, որոնց տարեկան արտադրանքը կազմում էր 11127 ռ.[31]։ Եթե այս 8 ձիթհանքերի արտադրանքի չափերը համեմատելու լինենք նույն 1893 թ. Կարսի մարզի գյուղերում գործող 38 ձիթհանքերի հետ, որոնց տարեկան ընդհանուր արտադրանքի գումարը հասնում էր 6170 ռ.[32], ապա պարզորոշ կերևա Էջմիածնի գավառի ձիթհանքերի առավելությունները, ձիթհանքեր, որոնց տարեկան արտադրանքի արժեքը կազմում էր 11127 ռ.։

1890-ական թվականներից սկսած բուսական յուղի որոշ տեսակների արտադրությունը համեմատաբար անկում է ապրում։ Ժամանակի ուսումնասիրողներից Կ. Խատիսովը նշում էր, որ «Տնայնագործական ձիթհանության պահպանման ջանքերը ավելորդ են։ Անդրկովկասի արդյունաբերական ու մշակութային կյանքի բնական, առաջընթաց զարգացումը կոչնչացնի նաև այս արտադրությունը, ինչպես որ վերացնում է կաշվի, բամբակի ու մետաքսե գործվածքների, մոմի ու ճարպի և այլ տնայնագործական արտադրատեսակներ»[33]։ Այս երևույթին նպաստում էին մի շարք հանգամանքներ։ 1880-ական թվականներից սկսած Արևելյան Հայաստանի հարթավայրային և տաք շրջաններում մեծ թափով զարգանում էր խաղողագործությունը, որի հումքի բազայի վրա հիմնվեցին գինու, օղու և կոնյակի կատարելագործված գործարաններ, որոնց արտադրանքը (հատկապես կոնյակինը) արտաքին շուկայում մեծ սպառում ուներ։ Միաժամանակ մեծ վերելք ապրեց բամբակագործությունը։ Այս երկուսի մշակումից գյուղացիները և, հատկապես, ձեռնարկատերերը ստանում էին անհամեմատ մեծ եկամուտ։ Այդ պատճառով էլ նշված շրջաններում, ի հաշիվ մյուս կուլտուրաների ցանքատարածության, անընդհատ աճում էին խաղողի այգիները և բամբակի դաշտերը։ Այսպես, եթե 1887 թ. Երևանի նահանգում բամբակի ցանքի համար օգտագործվել է 16329 դեսյատին հող[34], ապա արդեն երկու տարի հետո՝ 28894 դեսյատին[35]։ Դրա հետևանքով եթե,

29 «Сборник сведений о Кавказе», т. II, с. 177.
30 «Մշակ», 1884, № 29։
31 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 125, ց. 1, գ. 15, թ. 1—7, 9։
32 ЦГИА СССР, ф. 1263, оп. 2, д. 5128, л. 311.
33 К. Хатисов, նշվ. աշխ., էջ 114։
34 «Обзор Эриванской губернии за 1887 г.», Эривань, 1887, с. 9.
35 Նույն տեղում։

ինչպես նշված է վերևում, 1870-ական թվականներին միայն Երևանի ու Էջմիածնի գավառները տալիս էին տարեկան 100000 փութ բունջութի սերմ, ապա 1887 թ. ամբողջ նահանգը տալիս էր 27330 փութ[36], իսկ 1900 թ.՝ ընդամենը 8227 փութ[37]։ Սա մասամբ պետք է բացատրել նաև անբերրիությամբ։ 1897 թ. բունջութի սերմի արտադրությունը կազմել է 14923 փութ[38], 1898 թ.՝ 14338[39], իսկ 1901 թ.՝ 6563 փութ[40] և այլն։ Ի տարբերություն բունջութի, կտավատի յուղատեսակների արտադրությունն ավելի հարատևեց[41], քանի որ կտավատի յուղը համեմատաբար քիչ էր արտահանվում և կենտրոնացված էր երկրի լեռնային շրջաններում, որոնք առավել մեկուսացած էին հարևան գավառներից և արտաքին շուկաներից։ 1901 թ. Թիֆլիսում բացված գյուղատնտեսական ու արդյունաբերական ապրանքների կովկասյան հոբելյանական ցուցահանդեսում Երևանի նահանգից ուղարկված արտադրական նմուշներից բարձր գնահատվեցին Նախիջևանի գավառի ձիթհանքերի արտադրած կտավատի յուղի մի քանի տեսակներ[42]։

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հյուսիսային Կովկասում ու Թիֆլիսում սիստեմատիկ գործող արևածաղկի և այլ սերմնահատիկների ձիթհան ֆաբրիկաներն իրենց որակյալ ու էժան արտադրանքով աստիճանաբար սկսեցին նեղել տեղական տնայնագործական արտադրությանը՝ հանգեցնելով ձիթհանքերի թվի նվազմանը։ Բացի օբյեկտիվ պատճառներից, ձեռնարկությունների ավելանալն ու պակասելը կապված էր նաև տվյալ տարվա բերքատվությունից։ 1890—1900 թթ. Երևանի նահանգում ձիթայուղի արտադրության մասին ավելի պարզ ու որոշակի պատկերացում կազմելու համար բերենք հետևյալ աղյուսակը[43]։

Աղյուսակ № 3

Թվականը	Ձիթհանքերի քանակը	Արտադրանքի արժեքը (ռուբլիներով)	Բանվորների (մշակների) թիվը
1890	177	310996	447
1891	200	35550	512
1892	163	29860	430[45]
1893	150	28530	540[46]
1894	422[44]	29960	518
1896	193	34724	683
1897	201	39204	754
1898	196	34004	722
1900	185	75060	655

36 Там же, приложение к ведомости № I.

37 «Обзор Эриванской губернии за 1900 г.», Эривань, 1900, с. 4.

38 «Обзор Эриванской губернии за 1897 г.», Эривань, 1897, с. 6.

39 «Обзор Эриванской губернии за 1898 г.», Эривань, 1898, с. 4.

40 «Обзор Эриванской губернии за 1901 г.», Эривань, 1901, с. 6.

41 «Всеподданнейший отчет о состоянии Эриванской губернии за 1902 г.», Тифлис, 1902, с. 3.

42 М. Мучаидзе, նշվ. աշխ., էջ 629։

43 Աղյուսակը կազմվել է «Обзор Эриванской губернии» ժողովածուի 1890, 1891, 1892, 1893, 1894, 1896, 1897, 1898, 1900 թթ. նյութերի հիման վրա։

44 Նշված թիվը մեր կարծիքով սխալ է, որը գալիս է Ալեքսանդրապոլի գավառին և քաղաքին վերագրվող ձիթհանքերի թվից (289), իսկ նահանգի մնացած վայրերին ընկնում է 133. Եթե նկատի ունենանք, որ 1894 թ. նախորդող և հետագա տարիներին Ալեքսանդրապոլի ամբողջ գավառում և քաղաքում ձիթհանքերի թիվը չէր անցնում 67—70-ից, ապա մնում է եզրակացնել, որ 422 թվաքանակը սկզբնաղբյուրը կազմողների սխալն է։ 1895, 1899 թթ. տվյալները, ձեռքի տակ չունենալու պատճառով, վկայակոչված չեն։

45 ЦГИА СССР, ф. 1263, оп. 2, д. 5013, л. 409.

46 Նույն տեղում, գ. 5123, թ. 934—935։

Ինչպես երևում է № 3 աղյուսակից, Երևանի նահանգում 1890—1900 թթ. յուրաքանչյուր տարում ձիթհանքերի միջին թիվը կազմել է 211, տարեկան արտադրանքի արժեքը՝ 617988 ռ., յուրաքանչյուրինը՝ 68665 ռ., իսկ բանվորների թիվը՝ ավելի քան 584։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ քննվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում բուսական յուղերի արտադրության բնագավառում պակասել է որոշ յուղատեսակների (քունջութի, բամբակի և այլն) արտադրությունը, դրա փոխարեն ավելացել է մյուսներինը (կտավատի, գերչակի)։ XIX դ. վերջին և XX դ. սկզբին տնայնագործական եղանակով բուսական յուղերի արտադրությունը դեռևս պահպանվում էր և շարունակում էր արտադրական որոշակի դեր խաղալ երկրի տնտեսական կյանքում։

ПРОИЗВОДСТВО РАСТИТЕЛЬНЫХ МАСЕЛ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В.)

ГОАР АРАКЕЛЯН

Резюме

В экономике Армении в рассматриваемый период ведущее место занимало производство сельскохозяйственных продуктов, в том числе растительного масла. Производство растительного масла успешно развивалось и совершенствовалось особенно в Эчмиадзинском уезде. Процесс создания крупных предприятий и ликвидации мелких кустарных маслобоен шел очень медленно, и в первые десятилетия XX в., наряду с новыми, все еще продолжали действовать многочисленные старые маслобойни.